

ույլ եկածէն . մշակութիւնն ինչուան  
 դիւրամայն ալ փոխած է . հոն նաւարկու-  
 թիւնն երկրիս ամեն գօտիներէն բոյսեր  
 բերած է . այն Եւրոպան՝ ուր ջրշունն  
 խաղաղութեամբ իր թումբերը և տնակ-  
 ները կը կանգնէր միայնացեալ գետոց  
 եզերքը, բազմամարդացած է զօրաւոր  
 տէրութիւններով, ծածկուած են հունձ-  
 քերով և պալատներով . այս չափաւոր  
 թերակղզին՝ մարդկային սեռին մայրա-  
 քաղաք և տիեզերաց օրէնագիր եղած  
 է : Եւրոպան աշխարհիս ամեն կողմը  
 առաջիկայ կը գտուի . և անոր մեծ  
 ցամաքներուն մէկն՝ ամբողջ մեր գաղ-  
 թականներով բազմամարդ եղած է .  
 բարբարոսութիւնն, անապատներն և  
 արևուն տաքութիւնն՝ ալ պիտի չկա-  
 րենան քիչ տանէն զԱփրիկէ ալ մեր  
 գործօն ձեռնարկութենէն զրկել : Ով-  
 կիանիս ալ կարծես թէ մեր արուեստ-  
 ները և օրէնքները կը կոչէ : Ասիոյ ա-  
 հեղ տարածութիւնն զրեթէ մեր աշ-  
 խարհակալութիւններէն կոխուած է .  
 քիչ ժամանակէն Բրիտանական Հընդ-  
 կաստանն և Ասիական Ռուսաստանն  
 մէկ մէկու պիտի դպչին, և Չինաց ըն-  
 դարձակ սակայն տկար ինքնակալու-  
 թիւնը պիտի չկարենայ մեր ազդեցու-  
 թեանը դէմ կենալ թէ և դիմանայ մեր  
 դինուցը : Բովանդակ Ովկիանոս՝ Եւրո-  
 պացոց կամ Եւրոպայի գաղթականացը  
 սեփական կալուած է . մինչդեռ աշխար-  
 հիս միւս մասանց ամենէն կիրթ ազգերն  
 անգամ չեն համարձակեր իրենց ա-  
 փունքներէն հեռանալ, մեր դիմադրաւ  
 նաւորները մէկ բեռնէն ինչուան մէկ-  
 ալ բեռն կ'երթան այն ճամբաներով  
 զոր աշխարհագիրք իրենց սենեկաց մէջ  
 կը գծեն : Միայն մենք մինչև բնութեան  
 սոսկալի ուժերն իսկ մեր կամաց կը հպա-  
 տակեցընենք . երկրիս կայծակն պատե-  
 բազմողաց ձեռքն է . երկնքին կայծակն  
 ալ կապուած կ'ինկնայ մեր գիտնոց  
 ոտքը : Մենք մթնոլորտին ալ տիրելու  
 կը ջանանք . և եթէ դեռ ամպերն ալ  
 ալեաց պէս ոտքով չենք կոխեր, եթէ  
 դեռ չենք կըրնար մարմիննիս կորզել  
 այն կապերէն՝ որ այս մուրակիս հետ

զմեզ կը կապեն, գոնէ մեր անմահ և  
 ազատ մտածութիւնն՝ կը գրկէ միջո-  
 ցաց և դարուց ընդարձակութիւնները :  
 Գիտութեան ծառն մեր սեփական ժա-  
 ոանգութիւնն է, և միայն մենք գի-  
 տենք թէ զայն միշտ պահելու հնարքը,  
 և թէ անոր պտուղները կատարելագոր-  
 ծելու գաղտնիքը :

ՄԱԼԴԸ-ՊԵՏԵՐ

### ՀԻՆԳ ՇԱՐԱԹ ՕԴԱՊԱՐԿԻ ՄԷՋ

ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹԻՒՆ ԵՐԻՑ ԱՆԳՂԻԱՅԻՈՑ

ՅԱՓՐԻԿԷ

(Տես էրես 51)

ԳԼՈՒԽ Ը .

Ճոյիկ կարևորութիւնը . — Բիզոյիտիկ հրա-  
 մանատարը . — Քեկերտիկ զինարարը . —  
 Հրածելտի ձաշը . — Փետրուարի 21-ին  
 չուն . — Տորոյիկ ուսումնական գումա-  
 յումները . — Տիւրքիտիկ, Լիվիկայրն . —  
 Օրայիկ ձանապարհորդութեան մանրամասն-  
 քը . — Քեկերտի լեկու բանադատուած :

Փետրուարի 10-ն պատրաստութիւն  
 ները լմննալու մօտ էին, գունտերը՝ մէ-  
 կը միւսին մէջ ամիտփուած բոլորովին  
 լմնցած պատրաստ էին . իրենց մէջը լե-  
 ցուած օդոյ սաստիկ ճնշման մը կըցեր  
 էին դիմանալ, և այս փորձը աղէկ վրա-  
 տահութիւն մը կու տար անոնց ամբու-  
 թեանը վրայ, միանգամայն և կը վկայէր  
 անոնց շինութեանն համար եղած խնա-  
 մոց ճշգրութեանը :

Ճոյ ուրախութենէն ինքիրմէ գուրս  
 ելած էր . անգաղար կրիք Սղրիդէն  
 Միչէլլ պարոններուն գործարանը կ'եր-  
 թար, միշտ բազմազբաղ, այլ միշտ ծի-  
 ծաղերես, յօժարակամ այս գործիս  
 վրայօք տեղեկութիւններ տալու անոնց՝  
 որ իրմէն չէին խնդրեր, և ամենէն  
 աւելի պարծենալով՝ որ տիրոջը պիտոր  
 ընկերանար : կարծեմ՝ նաև որ օգապա-  
 րիկը ցուցնելով ու տղադորին մտածու-  
 թիւններն ու յատակագիծը մեկնելով,

և նաև այս ետքինս կիսաբաց պատուհանէ մը կամ ճամբաներէն անցած ժամանակը՝ ցուցնելով, քաջ երիտասարդը քանի մը կէտ-պսակներ կարող եղաւ շահելու. բայց ասոր համար զինքը արհամարհելու չենք. շատ իրաւունք ունէր իր ժամանակակիցներուն հետաքրքրութիւնն ու զարմանքը՝ իր շահին օգտեցնելու:

Փետրուարի 16ին Բիզոյիշոյր եկաւ Կրինիչի առջին խարիսխ ձգեց: Ութ հարիւր տակառաչափ ընդունակութիւն պտուտակաւոր շոգենաւ մըն էր, աղէկ քալող, որուն յանձն եղած էր բւեռաշին կողմերը գտնուող Սըր ճէյմս Բօսի ետքի արշաւանքին պաշարները նորոգելու: Անոր հրամանատարը Բէնէդ ա. նուամբ ազնուաբարոյ մարդ մը կը համարուէր. զտղզորը շատոնցունէ կը ճանչնար և կը յարգէր, ուստի և անոր այս ճամբորդութեանը վրայ մասնաւոր փոյթ մը կը ցուցնէր: Այս Բէնէդ հրամանատարը իր մորթին տակը աւելի ուսումնական մէկ մը կը բովանդակէր՝ քան թէ զինուորական մը. բայց և այնպէս այդ ձիրքը արգելք մը չէր ըլլար իր նաւուն վրայ չորս կարճահասակ խոշոր թնդանօթներ կրելու, որ երբեք մէկու մը վնաս ըրած չունէին, և միայն ամենախաղաղ շառչամունքներու կը ծառայէին:

Բիզոյիշոյի նաւախորչը անանկ տըրամադրուեցաւ՝ որ մէջը օդապարիկը զետեղուի, ուր փետրուարի 18ին ամենամեծ զգուշութիւններով փոխադրուեցաւ. և նաևուն խորչին յատակը անանկ ամբարեցին զայն՝ որ ամենայն վտանգէ ազատ ըլլայ. նաևակը և անոր վերաբերեալ բաները, խարիսխները, չուանները, պաշարները, ջրի արկղերը՝ որ տեղը հասնելէն ետքը պիտոր լեցընէին. բոլորը Ֆէրկըսընի աչքին առջև տեղերնին զետեղուեցան:

Ջրածին կազին շինութեանը համար՝ տասը տակառ ծծմբային թթու առին և տասը տակառ հին երկաթեղէն: Այս չափը պէտք եղածէն աւելի էր, բայց պէտք էր կարելի եղած կորուստնե-

րուն դէմն առնելու պատրաստ գտնուիլ: Կազը շինելու որոշուած կազմարանը, որ երեսնիւ չափ տակառներէ կը բաղկանար, նաւախորչին յատակը զետեղուեցաւ:

Այս ամեն պատրաստութիւնները փետրուարի 18ին իրիկուան ատեն ըմբցան: Տղզոր Ֆէրկըսընի և իր բարեկամ Քէննըտիին համար երկու հանգիստ սենեկախորչ պատրաստուած էր: Քէննըտի թէպէտ և կ'երգնուր՝ որ տղզորին հետ պիտոր չերթայ, 'ի վերայ այսր ամենայնի զինուց կատարեալ զինարանով մը շոգենաւը մտաւ, որոնց մէջ երկու գեղեցիկ կրկնահարացաններ կային, որ յետակողմէն կը լեցուէին, և ամենակատարեալ քարապինա մը՝ որ Էտիմպուրկի Փըրտի Մուրի և Տիքսընի գործարանին չէնք էր. այսպիսի ճարտարաչէն զէնքով մը դժուարին բան մը չէր որսորդին երկու հազար քայլ հեռաւորութենէ այժմեան մը աչքին մէջ գնտակ մը վարնել. ասկէ զատ վեց հարուածի երկու յրալօյլէր քօյդ առաւանակնկալ պիտոյից համար. իր վառօդանօթը, իր հրացանի փամբշտիկներուն քսակը, իր կապարն ու գնտակները, որ բաւական առատութեամբ էին, տղզորին որոշած ծանրութեան չափէն վեր չէին ելլեր:

Երբ ճանապարհորդքն փետրուարի 19ին նաւը փոխադրուեցան՝ ուր մեծ պատուով ընդունուեցան նաւապետէն և անոր սպաններէն. տղզորը՝ միշտ իր նոյն պաղ կերպարանօք, մէկ հատիկ փոյթ՝ իր արշաւանքն ունենալուն, Տիքսընը՝ յուզեալ յիրաւի, այլ առանց երեւցնել ուզելու, և ճոն խայտալով, ուստոստելով, և միանգամայն ծիծաղաշարժ խօսակցութիւններ ընելով. շուտ մը ստորակայ սպայից կայանին խեղկատակն եղաւ, ուր խորչ մը իրեն համար պահուած էր:

Փետրուարի 20ին Ալխարհագրական արքունի ընկերութիւնը հրաժեշտի մեծ ճաշ մը տուաւ տղզոր Ֆէրկըսընի և Քէննըտիի: Բէնէդ հրամանատարը և իր սպանները ներկայ էին նոյն ճաշին,

որ շատ ոգևորեալ եղաւ, և շողմարար գինարբութիւնքն իսկ խիստ առատ կենդանութեան մաղթանաց բաժակները առատազեղ հնչուեցան, ամենայն սեղանակցաց հարիւրամեայ կենդանութեան պարգևը ապահովցնելու դիտմամբ: Պարոն Փրանկիս Մ... նախագահ նստած էր սեղանին, որուն ոգիքը թէպէտ ուրախութեամբ յուզեալ էին, այլ ինքզինքը զուսպ ունելով կատարեալ ծանրաբարոյութիւն մը կ'երևցընէր:

Ի մեծ դարմանա Տիբ ֆէննըտիի, բաքոսեան մաղթանաց մեծ մաս մըն ալ իր անձին ուղղուեցան. յետ « պարծանք Անգղիոյ անվեհերն Ֆէրկըսընի » կենաց խմելէն, պէտք եղաւ խմել « վասն ոչ նուազ արիասրտին ֆէննըտեայ, անոր յանդուզն ընկերոջ » կենացը:

Տիբ շիկնեցաւ, և ընկերութիւնը զայն պարկեշտութիւն համարեց. ուստի և ծափահարութիւնքն կրկնուեցան, որուն վրայ Տիբ ալ աւելի կարմրեցաւ:

Պտղոց և քաղցրաւենեաց ժամանակ թագուհւոյն կողմանէ պատգամաւորութիւն մը հասաւ. երկու ճանապարհորդաց մեծարանք ընելով, անոնց ձեռնարկութեանը յաջող ելք մը կը մաղթէր:

Եւ այս դարձեալ առիթ մը եղաւ բաժակաց հնչիւնը լսեցընելու ՚ի պատիւ նորին « Յոյժ Շնորհաշուք վեհափառութեանը »: Կէս զիշերին, յետ սրտաշարժ երթայք բարոյներէ ու ձեռաց ջերմ սեղմելներէ, սեղանակիցք մէկմէկէ հրաժարեցան:

Բիզոյիշիին մակոյկները Ուէստմինս գրի առջև կը սպասէին. հրամանատարը՝ իր ճամբորդներովն ու սպաներովը մէջը մտաւ, ու թայմզին սրարշաւ հոսանքը զիրենք դէպ ՚ի կրինիչ վարեց:

Ժամը մէկին, նաւուն վրայ ամենայն ոք կը ննջէր:

կը շարունակուի:

## Մ Ա Հ Կ Ե Ս Ա Ր Ո Ւ

ՈՂԲԵՐԳՈՒԹԻՒՆ

(Տես էրես 61)

Հ Ա Ն Դ Է Ս Բ

Սրահ

ՏԵՍԱՐԱՆ Ա

ԱՆՏՈՒՌՈՍ, ԲՐՈՒՏՈՍ

ԱՆՏ. Այդ քո խորիստ արհամարհութիւն, այդ քո յանդուգն ժպրհուութիւն ոչ յառաքինութեանէ ինչ է, այլ ՚ի վայրենի գազանութենէ. ոչ պարտ էր քեզ խոնարհել անկանել առաջի գթութեան և զորութեան Կեսարու. և կամ գոնեայ չէր արժան ունին մատուցանել նմա. այլ աւանդ զի ոչ գիտէ Բրուտոս՝ թէ յու՛մէ՛ խորշի, յու՛մէ՛ վտարանջէ. և հեծէր արդեօք թէ խելամուտ էր:

ԲՐՈՒ. Շատ է ինձ հեծութիւնս, զոր հեծեմ արդ ՚ի բանս քո. այ՛ վատ արանց, անշնորհ քաղաքացի, թշնամի Հռովմայ ՚ի քէն մասնելոյ. զի՛ ինդրես, աղէ ասա. խաբէշ թերևս և կամ որսաղ զԲրուտոս. երթ յինէն, ՚ի բաց կաց. երթ բաղմեաց՝ գողալով ընդ ձեռամբ բռնաւորին՝ որ ճմլէ զքեզ. նշաւակեցան այսուհետև հաղբք քո. ծաւայութեան ցանկութեամբ հաշիս, չէզ և թըշուառական. և միթէ Հռովմայեցի՛ իցես դու, գո՛ւ և հիւպատոս, այ՛ անարժան:

ԱՆՏ. Մարդ եմ ես, Բրուտէ, և մտերիմ բարեկամ. ոչ ինդրեմ առաքինութիւն մեծ քան զայստ սիկ. իսկ դու՝ որ դիւցազնութեան թեկն ածես, բարբարոս ես անմարդի, և այդ քո լրբենի գո. ուղղութիւն ինդրէ զառաքինութիւն, զի տացէ զնա յահ և յերկիւղ և յատելութիւն. « Էլանէ »:

ՏԵՍԱՐԱՆ Բ

ԲՐՈՒՏՈՍ

Բուռն է ինձ, ո՛վ զիք, ՚ի թշնամանող լեզուէն. այ՛ ապերասան թունալից բերան. ահաւասիկ կարծեցեալ հիմունք տառապեալ իմոց հայրենեաց. ահա ձեր յաջորդք, դիւցազնացեալքդ Իեկոսք և Ովբատոսք. և դու անաչառ վրէժխընդիր օրինաց Հռովմայ՝ արիւն իմ, իմ Բրուտէ. զի՛նչ այլ մնաց մեզ ՚ի փառաց անախ Հռովմայ. ամենայն ոք ահիւ գողութեամբ մատուցեալ համբուրէ զանօրէն ձեռն բռնաւորին՝ որ զմեզ առ հասարակ զորդիս Հռովմայ յերկաթս դերէ: Կեսար, բարձ ՚ի մէնջ և զառաքինութիւն անգամ, և ես արդ զՀռովմ ինդրեմ, և զՀռովմ ես ոչ գտանեմ: Արդ՛ դուք վեհազուն ծնունդք Հռովմայ՝ զորոց աչք իմ տեսին զմահ սիրելեաց, և զորոց արդ զոտս արտասուօք թանամ ՚ի պատկեր փառաց. ո՛վ դու արիդ Պոմպէոս, դու աստուածացեալ հոգի Կաստիլի, և դու Շիսլոն դիւցա.